

285

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻԼԻԿԵԱՆ ՈՐԲԱԿԱՆԱՄ ԿԱՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ՄԱՍԻՆ - ԳՐԻԴՐԱ.

ՀՈՒՓՍԻՄԷ ԱՐԱՊԵԱՆ

ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏԱՐՐԱՎԱՆ Ա. Բ. ԴԱՍԱՐԱՆԻ

(ԽՈՒՊԵՍԵՐԵԱՆ Ա. ՄՐՅԱՆԱԿԻ Օ.Բ.Ա.Ն.Ա.Ց.Ա.Ը.)



5(075)

Q-83

Կ. ՊՈՂԻՄ, 1914

Տպարան "ԱՐԱԲՈՒ."

20 MAY 2010

19 MAY 2005

5 (075)

4-83

ԱՐ

Հ. ԱՐԱՊԵԱՆ

# ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏԱՐՐԱԿԱՆ Ա. Բ. ԴԱՍԱՐԱՆԻ



Վ. ՊՈԼԻՍ, 1914

ՏՊԱՐԱՆ "ԱՐԱՔԱՆ"

21.02.2013

255 գՏ:

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Իրեք եւ արտաքին աշխարհը ուսումնասիրելու պէտք երեւան կուգայ տղուն մէջ անմիջապէս որ՝ ան կը զիտակցի ապրած միջավայրին, ասկէց ծագում կ'առնէ իր մէջ այն բուռն հետաքրութիւնը որ զինքը հարցումներու կը մզէ։ Ամեն ինչ իրեն համար զաղտնիք մըն է։ ամեն ինչ իրեն համար անձանօր մը։ ուսուցիչը այդ հետաքրութիւնը կը ծառայեցնէ տղուն օգտին անոր տալով նախևական կրութիւն մը նարտարօրէն ուսումնասիրուած։ Տղան լաւ եւս կրթունէ իրեն հաղորդուած ծանօթութիւնները երբ կը տեսնէ որ անոնք կը բդիմին իրերէն որ զինքը կը շրջապատէն։ որոնց կապուած է իր եռթիւնը եւ որոնց գոյութիւնը իր եռթեննեն կախում ունի։ ուրեմն այդ ծանօթութիւնները իրեն պիտի ներկայանան իր շուրջի իրերէն։ նախ տուննեն եւ պարտեզնեն ազարակնեն կամ մարզագետիննեն։ արտերէն զոր կը նանջնայ։ յետոյ անցնելով անձանօրին՝ անտառներէն, հեռաւոր երկիրներէն պիտի ստանայ ծանօթութիւններ։ Արժաքին աշխարհի այս ուսումնասիրութիւնը անսպառ աղբիւր մըն է։ մանուկը ծարաւի է անոր, ուսուցիչը այդ ծարաւը կը յագեցնէ բուն խոկ վայրկենին, որ մանուկին մտաւորական զարրենումին վայրկեանն է։ Այդ ծանօթութիւնները առարկայական ցանակ բացատրութենք աւելի բան մըն են։ մասնաւորէն ընդհանուրին առաջնորդելու կը ձգտին։

Ուասնողը դեպի ընդհանուր ծանօթութիւններ, դեպի զիտութիւններ խայլ մք առնելով՝ իր կեանքին կուտայ նոր եւ իրական զարկ մը։

Իրերու զիտութիւնը իր նպատակին կը հասնի այն տաեն երբ ձեռակերտ առարկաներէ բնական առարկաներու անցու-



7057-56

## — ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ —

մը կը կատարուի նարտարօրէն. այսպէս, կենդանական առարկաներու զննութենէն՝ յոյժ բնականաբար կանցնի կենդանաբանութեան. պտուղներու, ծաղիկներու զննութեամբ ուսանողը ը հետաքրքրուի բուսաբանութեան. բներեւոյթի մը տեսքը իրեն կը ներշնչէ բնագիտուրիւն ուսանելու իղձը եւ այսպէս բնութեան ու եւ է գործօն գորութեան մը տպաւորութիւնը սիրելի կրնայէ իրեն բնալուծուրիւնը։ Բնական կերպով միացած բոլոր այս գիտական ծանօթութիւնները ոչ միայն կ'ընդարձակեն ուսանողին հմտութեան միերից այլ եւ զայն կը դարձնեն ուսումնասիրող միտք մը, զննող իմացականութիւն մը, կ'առաջնորդեն խորհրդածութեան, բանի մը նպատակին եւ սկզբունքին բափանցողութեան։

Այս խորհրդով է որ մզուեցանք սոյն իրագիտութիւնը առարկայական գիտութենէ աւելի բան մը ընել. նառագայրի անցք մը հազիւ բանալով վարագութին վրայ որուն ետին ամբողջ գիտական աշխարհ մը կայ։

Ուսանողը բող սիրէ գիտութիւնը. մարդս մեծ է գիտութեամբ միայն։

Հ. Ա. Ա. Պ. Ե. Ա.

Պ. Ա. Ս. Ա.

ԲԱԴԴԱՏՈՒԹԻՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ԵՒ ԲՈՅԱՄԵՐՈՒ

### Դատին նպատակը

Զարգացմել յղացման, խմասախորութեան և բացարձութեան կարողութիւններ, զործարանաւոր հակաց եւկու շաւմու զժնուած հմանութիւնները ու աւրելուրիւնները վճարուել աշակերտին։

### ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Օրիորդը. — Կ'ուզեմ որ ըսէք ինձ թէ երէկ երեկոյ, տուն գացած ատեննիդ ձեր ճամբուն վրայ ի՞նչ տեսաք, ի՞նչ կենդանի։

Աշակերտ մը. — Մեծ շուն մը տեսայ ես։  
Ուրիշ աշակերտ մը. — Պզտիկ կատու մը տեսայ։

Ուրիշ մը. — Ես ալ ձի մը տեսայ։  
Օրիորդ. — Ո՞վ կընայ ըսել՝ շուները, կատուները և ձիերը ի՞նչ կ'ըսուին։

— Կենդանի կ'ըսուին անոնք։

— Երբեմն տուն գացած ատեննիդ, ու և է տան  
մը առջեկ կ'անցնիք. այդ տունը գեղեցիկ պար-  
տէզ մը ունի. այնպէս չէ. պարտէզ մը որ ածու-  
ներով զարդարուած է, և ինչով տակաւին. ա-  
ծուներուն մէջ ի՞նչ կայ:

— Ալուոր ծաղիկներ կան:  
— Ծաղիկներն ի՞նչ կ'ըսուին:  
— Ծաղիկներն կ'ըսուին բոյս:  
— Լաւ: Զեր մէջէն ով կուզէ կենդանիի մը  
և բոյսի մը վրայ բան մը ըսել. ձեռք վերցու-  
ցէք: Զեր մէջէն որո՞նք վիրաւորեալ կենդանի մը  
տեսած են: Զեռք վերցուցէք: Քանի մը տղայ  
ձեռք կը վերցնեն:

— Ի՞նչ կենդանի տեսած ես դուն:  
— Շուն մը տեսած եմ՝ որուն թաթիկը կոտ-  
ուծ էր:

— Ի՞նչպէս վիացար թէ վիրաւորուած էր ան:  
— Որովհետեւ կը կաղկանձէր:  
— Եւ ինչու կը կաղկանձէր:  
— Որովհետեւ թաթիկը կը ցաւէր:  
— Ցաւ կղզար, այնպէս չէ: Զեր մէջէն ո-  
րո՞նք կը կարծեն թէ ծառ մը ցաւ կղզայ՝ երբ  
անոր զարնենք:  
— Եւ ոչ մէկը:  
— Ի՞նչ է շունը:  
— Շունը կենդանի է:  
— Ուրեմն երբ որ կենդանի մը վիրաւորուած  
է կղզայ . . . ի՞նչ:

— Ցաւ:

— Եւ ի՞նչ է ծառը

— Ծառը բոյս է:

— Ուրեմն բոյսը չզգա՞ր . . .

— Ցաւ:

— Լաւ ուրեմն կենդանիի մը և բոյսի մը մի-

ջեւ գտնուած տարբերութիւնը ի՞նչ է:

— Կենդանին ցաւ կղզայ և բոյսը չզգա՞ր:

— Շատ լաւ:



Դ. Ա. Ս. Բ.

Օրիորդը.— Արօտի մը քովէն անցած էք եր-  
բէք, և տեսած էք անոր մէջ ձիեր:

— Այն, ես անցած եմ:

— Ի՞նչ կընէին հոն ձիերը:

— Խոտ կուտէին:

— Ուրիշ:

— Կը վազվակէին:

— Երբ որ ձի մը ցանկի մը մէջն է և կը  
տեսնէ որ ցանկապատէն անդին կանաչներով  
լեցուն տեղ մը կայ. ի՞նչ կը կարծէք որ ձին  
կ'ուզէ ընել այն ատեն:

— Կ'ուզէ հոն երթալ:

— Անոնք որ այսպէս կը կարծեն թող ձեռք  
վերցնեն:

— Եւ երբ այն տեղի խոտն ուտէ հատցնէ

ի՞նչ կ'ուզէ ընել:

— Կ'ուզէ ուրիշ տեղ մը երթալ:

— Այսպէս ուրեմն կրնայ տեղէ մը ուրիշ  
 տեղ երթալ :

— Կրնայ տեղէ մը ուրիշ տեղ երթալ :

— Այս, ուրիշ խօսքով կրնայ շարժիլ. ծառն  
 ալ կը շարժի արդեօք :

— Ծառը չի կրնար շարժիլ :

— Ինչու համար :

— Որովհետև զետնին փակած է այն :

— Այս, հողին վրայ հաստատուած է :

— Զիուն համար ի՞նչեր ըսիք :

— Հսինք թէ ձին կենդանի է :

— Հապա ծառը :

— Ծառը բոյս է :

— Ուրեմն ինչ տարբերութիւն կայ կենդա-  
 նիի և բոյսի միջև :

— Կենդանին կրնայ տեղ փոխել, բայց բոյսը  
 հաստատուած է հողին վրայ :

— Շատ լաւ :



Դ Ա Ս Դ .

Օրիորդ. — Կատու մը կամ ծաղիկ մը մինչեւ  
 վերջը կ'ապրին :

— Ոչ, չեն ապրիր, կը մեռնին :

— Անոնք չի մեռած ի՞նչ էին կ'ըսենք :

— Կ'ըսենք թէ ողջ էին :

— Այս. ողջ էին, այսինքն թէ կեանք ու-  
 նէին. կենդանին և բոյսը երկուքն ալ կենդանի

էակներ են : Եւ ի՞նչ կըսենք երբ երկուքն ալ  
 դաղրին կեանք ունենալէ :

— Կըսենք թէ մեռած են :

— Ուրեմն ի՞նչ բան կայ որ երկուքին ալ  
 հաւասար ըլլայ :

— Երկուքն ալ կ'ապրին: Երկուքն ալ կը մեծ-  
 նան, երկուքն ալ կը մեռնին :

— Այդ ամենքն մէկ խօսքով մը ըսէք հիմա :

— Կենդանին և բոյսը կ'ապրին, կը մեծնան  
 ապա կը մեռնին :

— Շատ լաւ :



Դ Ա Ս Դ .

Օրիորդը. — Զեր մէջէն քանի՞ հոգի տեսած է  
 ձիուն խոտ ուտելը :

Քանի մը տղաք ձեռք կը վերցնեն :

— Խոտը ձիուն ի՞նչն է :

— Խոտը ձիուն մնունդն է :

— Ուր կը դնենք մենք մեր սնունդը ուտե-  
 լու համար :

— Մեր բերնին մէջ կը դնենք մենք մեր սը-  
 նունդը :

— Եւ ինչ է ձին :

— Զին կենդանի մըն է :

— Ուրեմն կենդանին ուրկէ ներս կ'առնէ իր  
 սնունդը :

— Բերնէն :

— Զեր մէջէն որ պղտիկ աղջիկը կամ որ

պղտիկ մանչը կրնայ ըսել ինձ թէ բոյսն ինչպէս  
կը սնանի :

Ոչ ո՛վ կը պատասխանե :

Օրիորդը .— Երբ ջուր լեցնեմ բոյսի մը ար-  
մատին վրայ, ուր կ'երթայ ջուրը, կրնաք ըսել :

— Բոյսին արմատներուն մէջ կ'երթայ:

— Այն, ջուրը ի՞նչ օգուտ ունի անոր:

— Բոյսը կը մեծցնէ :

— Եւ ի՞նչ օգուտ ունի մեզի մեր սնունդը:

— Մեզ կը մեծցունէ :

— Եթէ բոյսին իր արմատներով առած ջուրը  
զայն կը մեծցնէ . այդ ջուրը ի՞նչ է ուրեմն բոյ-  
սին համար :

— Բոյսին սնունդն է այն :

— Շատ լաւ. ով կրնայ ըսել ինձ թէ բոյսն  
ուրիշ ի՞նչ բանի միջոցաւ կը սնանի : Մէկն ալ  
չգիտե՞՞ր : Ուրեմն ես ըսեմ, մտիկ ըրէք. իր տե-  
րեւներովը : Զեզմէ մէկը կրնայ ըսել հիմա թէ  
տերեւներովը ի՞նչ տեսակ սնունդ կ'առնէ :

— Օդ կ'առնէ, (տոլայ մը):

— Ջուր կ'առնէ (ուրիշ տոլայ մը):

— Կենդանին սնունդը բերնովը կ'առնէ. բոյ-  
սը արմատներուն և տերեւներուն միջոցաւ կ'առ-  
նէ զայն : Կենդանին թոքերովը կը շնչէ, բոյսը  
տերեւներովը :

Աւագիշը բանի մը բացատրուրիւններ կուտայ բոյսերու  
սնուցման կերպին վրայ եւ աշակերտներուն գտնել կուտայ  
աս խօսք .— Կենդանին բերնովը կառնէ իր սնունդը եւ բոյ-  
սը իր արմատներովը ու տերեւներովը կառնէ զայն :



Դ. Ա. Ս. Ե.

— Զեզնէ որնիք կրնան ըսել ինձ թէ ի՞նչպէս  
շունչ կ'առնենք մենք:

— Մեր թոքերովը, մեր քիթովը ու բերնովը:

— Շատ լաւ, հապա ձին, եզը, շունը ի՞նչ-  
պէս կը շնչեն :

— Անոնք ալ նոյնպէս իրենց թոքերովը :

— Հիմա քանի՞ տղայ կը կարծէ թէ բոյսերն  
ալ շունչ կառնեն :

Քանի մը տղայք կը կարծեն թէ՝ այն կը շնչեն,  
քանի մը տղայք եւս ասոր հակառակը կը կարծեն:

— Այն, բոյսերը կը շնչեն : Ո՞վ կրնայ ըսել  
թէ ինչպէս կը շնչեն :

Ոչ ո՛վ պատասխանե :

— Էհ ուրեմն. ահա կ'ըսեմ, իրենց տերեւնե-  
րովը կը շնչեն :

— Հիմա՝ Տիրան գուն ըսէ տեսնեմ՝ թէ կեն-  
դանին ինչով կը շնչէ և բոյսն ի՞նչով:

— Կենդանին իր թոքերովը կը շնչէ, իսկ բոյ-  
սը իր տերեւներովը :

Քաղուած.— Կ'ուզեմ որ Զարուհին ըսէ ինձ հի-  
մա տարբերութիւնները որ կան կենդանիի մը  
և բոյսի մը մէջ :

Ա. Կենդանին ցաւ կզգայ, բայց բոյսը չզգար:

Բ. Կենդանին կրնայ տեղ փոխել, շարժիւ,  
բայց բոյսը չկրնար:

Գ. Բոյսը, կենդանին կ'ապրին, կը մեծնան և  
կը մեռնին :

Դ. Կենդանին մնունդը բերնովը կ'առնէ. բոյսը արմատներուն, տերեւներուն միջոցաւ կ'առնէ զայն :

Ե. Կենդանին թոքերովը կը շնչէ, բոյսը տերեւներովը:



### Դ. Ա. Ս. Զ.

Օրիորդը.— Գիտէք թէ մարդուն ամենէն առաջին և ամենէն կարեոր պէտք մնունդն է:

Հսէք տեսնեմ ո՞ր բաները մնունդ կըսուին :

— Մնունդ կը կոչուին այն ամեն բաները ուրոնք կ'ուտառին :

— Մնունդները քանի՞ տեսակներու կը բաժնուին .

Ոչ ո՛վ կը պատասխանէ:

Օրիորդը.— Տղաքս, մնունդները կը բաժնըւին երկու տեսակներու, բուսական և կենդանական: Հիմա ըսէք տեսնեմ՝ որոնք են բուսական մնունդները :

— Բուսական մնունդներն են. հաց, բանջարեղինները, ընդեղէնները, պտուղները ևայլն :

— Կենդանականները որոնք են :

— Միս, կաթ, հաւկիթ, կարագ, մեղր:

— Մարդիկ ապրելու համար այս երկու տեսակ մնունդներէն որոնւն աւելի պէտք ունին:

— Մարդիկ ապրելու համար այս երկու տեսակ մնունդներուն ալ պէտք ունին :

Ինչո՞ւ համար այդ երկու տեսակին ալ պէտք

ունի մարդ ապրելու համար, գիտէ՞ք, որովհետեւ մին առանց միւսին զինքը անօթի և տկար կը թողու :



### Դ. Ա. Ս. Է.

ՀԱՅ

Օրիորդը.— Հացը ինչո՞վ պատրաստուած ար-նունդ է :

— Հացը ցորենի ալիւրով պատրաստուած մնունդ է :

— Հացի տեսակներն որոնք են

— Հացի տեսակներն են ճերմակ կամ սև :

— Հացի յատկութիւններն որոնք են :

— Թարմ հաց կամ օթեկ :

— Տղաք, ամեն երկրի մէջ ցորեն շհասնիր, կան շատ ցուրտ կամ լեռնոտ երկիրներ ուր ցորեն չի հասնիր :

— Այն ատեն ցուրտ և լեռնոտ երկիրներու մէջ հացը ի՞նչէ կը շինեն, օրիորդ:

— Ցուրտ կամ լեռնոտ երկիրներու մէջ, մարդիկ իրենց հացը ուր և բոյսերէ կը շինեն, ինչպէս հաճար, կորեակ, սև ցորեն, եղիպատացորեն և շագանակ :



**ՕՐԻՈՐԴԸ.** — Ի՞նչ է այս, տղաքս,  
— Յորենի հասկ մըն է, օրիորդ։  
— Այս հասկին մէջ ի՞նչ կայ, կրնաք ըսել։  
— Այդ հասկին մէջ ցորենի հատիկներ կան։  
— Սա հատիկներուն պէս, այնպէս չէ։  
— Այս, օրիորդ։  
— Շատ լաւ, կը յիշեք թէ մարդիկ ինչ բա-  
նի կը գործածեն զայն։  
— Յորենով հաց կը շինեն. Օրիորդ։  
— Միտքերնիդ լաւ հասկցուցեք, ցորենի սա  
հատիկներով կը հանեն։  
— Ոչ, օրիորդ, այդ հատիկներէն հանուած  
ալիւրով։  
— Լաւ, բայց մարդիկ այդ հատիկներուն  
մէջի ցորենը ի՞նչպէս կը հանեն։  
Ոչ ո՛վ կը պատախանէ։  
— Լաւ. ըսեմ ձեզի, աղօրիքի մէջ, երկա-  
նաքարի տակ ճգմելով ատոնք։ Եւ հոր կը  
բուսնի ցորենը։  
— Յորենը դաշտերուն մէջ կը բուսնի։  
— Ի՞նչպէս կը կարծէք՝ ցորենը դաշտերուն  
մէջ ինքնիրեն կը բուսնի արդեօք։  
— Ոչ, օրիորդ, առաջուց պէտք է ցանել զայն։  
— Շատ լաւ, հողին մէջ ցորենը դեռ չցա-  
նած մարդիկ ի՞նչ կընեն հողը։

— Հողը կը փորեն և աղը կը ցանեն։  
— Պէտք է ըսել հողը կը հերկեն, և աղբով  
կը պարարտացնեն զայն։



**ՕՐԻՈՐԸ.** — Միսը ուսկից կը հանուի և ի՞նչ-  
պիսի սնունդ է։

— Միսը օգտակար սնունդ մըն է որ կենդա-  
նիներէն կը հանուի։

— Ուտելու միսերը քանի՞ կարգի կը բաժ-  
նուին, գիտէ՞ք։ Ուտելու միսերը երեք կարգի կը  
բաժնուին. որոնք են. մսագործի միս, որսի միս  
և ջրային կենդանիներու միս։

— Մսագործի միսերը որոնք են, ըսէք։

— Ոչխարի միս։

— Ոչխարի միսէն զատ կան նաև գառնուկ,  
այծ, ուլ եղ, կով, հորթ, խոզ և ընտանի հաւեր։

— Որսի միսերը որոնք են, օրիորդ։

— Որսի միսերն են նապաստակ, ճագար,  
այծեամ, եղջերու և որսի հաւեր՝ ինչպէս կարաւ,  
լորամարգի են։

Հիմա զուք ըսէք, տղաքս, ջրային կենդանի-  
ներէն որոնք ուտելու կը գործածուին։

— Ջրային կենդանիներու մէջէն ուտելիքնե-  
րըն են ծովու և անուշ ջրի ծուկեր։


— Կան նաև, տղաքս, կրեայ, խեչեփառ, խեց-  
գետին, ուլականջ, ոստրէ։



ՀԱՅԻ

- Որո՞նք են ընտանի հաւերը, տղաքս :
- Հաւը, բադը, սագը, հնդկահաւը :
- Այսօր կ'ուզեմ ձեզի ցոյց տալ մի քանի պատկերներ : Ի՞նչ կը տեսնէք այս պատկերին մէջ :
- Մենք կը տեսնենք տուն մը պարտէզով, կը տեսնենք ծերունի կին մը և հաւ մը :
- Ի՞նչ կընէ ծերունի կինը, կրնաք ըսել :
- Ծերունի կինը աթոռին վրայ նստած գառի կը ցանէ հաւին առջև :
- Հաւը ի՞նչ կընէ :
- Հաւն ալ գարին ուտելու վրայ է :
- Հիմա ըսէք տեսնեմ՝ հաւը ինչով ծածկը ւած է :
- Հաւը ծածկուած է փետուրներով :
- Սա ամանին մէջ դրուածը ի՞նչ է արդեօք, կրնաք ըսել :
- Ատոնք հաւկիթներ են :
- Հաւկիթը ուրկէ կ'ստանանք, գիտէք :
- Հաւէն, հաւէն :
- Լաւ, հաւը ի՞նչ օգուտ ունի եղեր մեզի :
- Հաւը կուտայ մեզի հաւկիթ :
- Ուրիշ ի՞նչ կուտայ :
- Միս և փետուր :

Գարուն



— Հիմա տեսնեմ ով պիտի կրնայ պատմել  
սիրուն կերպով փոքրիկ պատմութիւն մը այս  
կող և հաւին վրայ:

(Տղաք իրենց ձեռները վեր կը վերցնեն հասկցնելու հա-  
մար քէ ամենն ալ կարող են պատմել ուզուած պատմու-  
թիւնը.)

— Ամէնքդ ալ միտք պահեր էք ուրեմն իմ  
ըրած պատմութիւնս. ըսէք տեսնեմ ամէնքդ ալ  
մէկտեղ այնպիսի սիրուն կերպով որ հաւնիմ:

Տղաք մնկ բերան կ'սկսին պատմել:

Պառաւ կին մը հաւ մը ունէր, որ ամեն օր  
մէկ մէկ հաւկիթ կ'ածէր. ամեն օր երկու կամ  
երեք հաւկիթ ածելու յոյսով շատ գարի կեր-  
ցուց հաւին և զիրցուց զայն: Բայց զիրցած  
հաւը ալ հաւկիթ չածեց:

— Շատ լաւ, ամենքդ ալ ուզածիս պէս  
միտքերնիդ պահեր էք պատմութիւնը. հիմա  
քանի մը հարցումներ ալ ունիմ ձեզի. մտիկ ը-  
րէք, տեսնեմ. հաւը այս պառաւինն էր, այն-  
պէս չէ:

— Այո:

— Հաւը ամէն օր ի՞նչ կ'ածէր:

— Մէկ մէկ հաւկիթ:

— Ինչու համար պառաւը սկսաւ շատ գարի  
տալ հաւին:

— Անոր համար որ օրուան սէջ քանի մը  
հաւկիթ մէկտեղ ածէ հաւը:

— Բայց հաւը կրցմաւ ածել շատ հաւկիթ:

— Ոչ, բնաւ չածեց:

— Ինչու համար ալ չածեց:

— Անոր համար որ զիրցած էր և զիրուկ  
հաւերը հաւկիթ չեն ածեր:

— Կինը եթէ զիտնար որ իր հաւը զիրցածին  
պէս ալ հաւկիթ չպիտի ածէր՝ արդեօք պիտի ու-  
զէր զիրցնել զայն:

— Ոչ, չպիտի ուզէր զիրցնել զայն:

— Հիմա ըսէք տեսնեմ՝ ի՞նչ կը սորվիք այս  
պատմութենէն:

— Կը սորվինք թէ բան մը չգիտնալը վնա-  
սակար է: Բան չգիտցողը ունեցածն ալ կը կոր-  
սընցնէ այս կնկան պէս:

— Ուրեմն ի՞նչ ընկելու ենք, տղաքս:

— Պէտք է միշտ նոր բաներ սորվելու ետևէ  
ըլլանք:



Դ. Ա. Ս. Ժ. Բ.

Բ Ա Դ

Օրիորդը. — Ըսէք տեսնեմ, տղաքս, ի՞նչ կը  
տեսնէք այս պատկերին վրայ:

— Կը տեսնենք մնաք բաղիկներ այդ պատ-  
կերին վրայ:

— Կը նաև ըսել ինձ թէ բաղը հասակով որի  
չափ է:

— Բաղը հասակով հաւի չափ է:

— Բաղին զլուխը ի՞նչպէս է: Կտուցը ի՞նչ-  
պէս:

— Բաղին զլուխը փոքրիկ է և կոր. կտուցը  
լայն է, տափակ և երկար:

— Լաւ, հիմա խօսեցէք ինձի բաղին քթի ծակերուն, աչքերուն և ականջներուն վրայ:

— Կտուցին վրայ կը գտնուին բաղին քիթի ծակերը. աչքերը երկու հատ են. երկու հատ ականջներ ունի բաղը, բայց անոնք որոշ չեն երեւիր:

— Լաւ, բաղին պարանոցը ի՞նչպէս է, մարմինը ի՞նչպէս:

— Բաղին պարանոցը բաւական երկայն է, մարմինն ալ ձուաձեւ:

— Զուաձեւ բառն ի՞նչ ըսել է, տեսնեմ, ով միտք պահած է:

— Զուաձեւ կը նշանակէ հաւկիթի ձեւ ունեցող:

— Շատ լաւ, սիրուն տղաքս, աղէկ պատասխաններ կուտաք ինձ: Դուք խօսեցաք բաղին հասակին, զլխուն, կտուցին, աչքերուն և ականջներուն վրայ, խօսեցաք նաև անոր մարմնոյն ու պարանոցին վրայ, այնպէս չէ:

— Այս, այս:

— Հիմա կը նաև ըսել ինձ թէ բաղին կուրծքը

ի՞նչպէս է:

— Բաղին կուրծքը դուրս ինկած է:

— Մարմնոյն վրայ բաղն ի՞նչ ունի. ի՞նչ

ունի տակի կողմէն:

— Մարմնոյն վրայ բաղը ունի երկու թեւ, իսկ տակէն բաղն ունի երկու ոտք:

— Ի՞նչ կը տեսնէք ոտքերուն վրայ:

— Ամեն մէկ ոտքերուն վրայ բաղն ունի

չորս մատ, որոնց ծայրերը կան բութ ու լայն եղունգներ:

— Բաղին մատերն ուր ուղղուած են: Եւ ի՞նչ մասնաւոր բան մը ունին:

— Բաղին մատներուն երեքը ուղղուած են գէպի առաջ, իսկ մէկ փոքրիկը դէպի ետ: Մատներուն մէջ ունի մաշկ:

— Շատ լաւ. հիմա դուք պիտի խօսիք ինձի քիչ մըն ալ բաղին ուրիշ բաներուն վրայ: Ըսէք տեսնեմ՝ բաղն ի՞նչ ունի մարմնոյն ետեւը:

— Մամնոյն ետեւը բաղն ունի կարճ պոչ:

— Ի՞նչով ծածկուած է բաղը:

— Բաղն ալ հաւուն պէս ծածկուած է փետուրներով, բայց կուրծքի փետուրներուն տակըն ալ շատ աղուամագ ունի (բարակ մազ):

— Բաղերն ի՞նչ յատկութիւն ունին, տեսնեմ՝ ով կը յիշէ:

— Բաղերը շատ լաւ կը լողան ջուրի մէջ, իսկ ցամաքի վրայ անոնք կը պտըտին կամաց կամաց և օրօրուելով:

— Կրնաք այդպէս ըսել առհասարակ ամեն բաղերու համար:

— Ոչ, օրիորդ. վայրի բաղեր ալ կան, որոնք կը թոշին շատ արագ:

— Ըսել է ընտանի բաղերը անկարող են թոշելու:

— Այս, ընտանի բաղերը չեն կրնար թոշիլ:

— Լաւ, հիմա ըսէք ինձի թէ բաղերը ի՞նչ մնունդով կը մնանին:

— Բաղերը կը մնանին որդերով, միջատներով, խոտով, ընդեղէններով . . .

— Անոնց միսն ի՞նչպէս է:

— Անոնց միաը շատ համով է. համեղ կերակուր կը պատրաստուի անոր միսէն:

— Հապա անոր հաւկի՞թը :

— Շատ համով է, հաւուն հաւկիթին պէս:

— Շնորհակալ եմ, տղաքս, հարցումներուս ձիշը և արթուն պատասխաններ տուիք. հիմա կ'ուզէք ըսել ինձ բաղիկի վրայ սիրուն բան մը, ուստանաւոր գրուած մը :

Տղաք կ'սկսին արտասանել մէկ բերան .

«Բաղիկ բաղիկ . . .»

ԾԱՆՈԹ.— Այս եւ նախորդ դաւերուն նպատակն է զարգացնել մանեկան դիմերու եւ ուսումնասիրերու կարողութիւնները: Ուսուցիչը ինձ խօսեց աւելի, պիսի և խօսեցներու առաջնորդի երախանները՝ զանոնի ուշադիր դարձներու համար դափնե:



#### Դ. Ա. Ս Ժ. Գ.

##### ԸՄՊԵԼԻ

Օրիորդը .— Ըմպելին ի՞նչ է, ի՞նչ բաներ ըմպելիք կը կոչուին:

— Ըմպելիք կը կոչուին ջուրը և խմելու յատուկ հեղուկներ:

— Ո՞րն է գլխաւոր ըմպելիքը և ի՞նչ օգուտ ունի այն:

— Ըմպելիքներուն զլխաւորն է ջուրը որ կը զովացնէ և ծարաւը կ'անցնէ,

— Աղէկ, տղաքս, ջուրէն դատ ըմպելի կը

կոչուին նաև այնպիսի հեղուկներ, որ կը խմենք զովութիւն, տաքութիւն, արթնութիւն և ուրիշ ազգեցութիւններ ընդունելու համար: Ըսէք ինձ քանի մը ըմպելիքներ տեսնեմ:

— Գինի, գարեջուր և օղի:

— Գինին, գարեջուրը և օղին ոգելից ըմպելիք կը կոչուին, որովհետեւ շատ գործածուելով կը զինովցնեն:

— Ուրիշ տեսակ ըմպելիքներ ալ գիտէք :

— Սուրճը և թէյլ:

— Սուրճը և թէյլ շափաւոր գործածուելով սննդարար են, ըսէք, տղաքս, ուրիշ ըմպելիքներ ալ՝ որոնք կը պատրաստուին զանազան պտուղներէ:

— Ամեն տեսակ օշարակները :

— Օշարակները զովութիւն կուտան մեզի ամրան տաքերուն, երբ պաղեցնելով խմուին :



#### Դ. Ա. Ս Ժ. Գ.

##### ՀԱՄԵՄՆԵՐ

Օրիորդը .— Ի՞նչ տեսակ նիւթեր «համեմ» կը կոչուին :

— Համեմ կ'ըսուին այն նիւթերը որ համ կուտան :

— Ի՞նչ բանի, տղաքս :

— Համեմները համ կուտան մեր կերակուրներուն և ըմպելիքներուն :

— Տեսէք ես ինչպէս պիտի բացատրեմ ձեր գաղափարը կամ ըսել ուզածը։ Համեմ կը կոչուին այն տեսակ նիւթեր, որոնք մեր կերակուրներուն և ըմպելիքներուն մէջ համ ու հոտ աւելցնելով ախորժելի կ'ընեն զանոնք։ Հիմա ըսէք համեմները որոնք են,

— Համեմներն են աղ, պղպեղ, կինամոն, անանուխ, սոխ, սխտոր, քացախ և մերթ շաքարն ու ձէթն ալ իբր համեմ կը ծառայեն։



#### Գ.Ա.Ս Ժ.Ա.

##### ՀԱԳՈՒԱՏ ԵՒ ԲՆԱԿԱՐԱՆ

Օրիորդը։ — Սննդեան պիտոյքէն զատ մարդ ի՞նչ տեսակ նիւթերու պէտք ունի անհրաժեշտ։ — Սննդական պիտոյքէն զատ մարդս անհրաժեշտ պէտք ունի հագուստի և բնակարանի։

— Մարդն ի՞նչ միջոց զործածած է հագուելու համար։

— Մարդը կենդանիներուն մորթէն և բուրդէն հագուստներ շինած է։

— Մտիկ ըրէք, տղաքս, մարդն ամենէն առաջ ծածկուած է այն կենդանիներուն մորթով որոնց միսը իրեն իբրեւ սնունդ ծառայած է։ յետոյ անոնց ստեւը, բուրդը և կաշին օգտակար կերպով զործածելու և իբրեն համար աւելի թեթեւ և աւելի վայելուց ագանելիքներ (հագուստներ) պատրաստելու միջոցները գտած է։ Ասոնցմէ

զատ տունկերէն ալ մարդիկ օգտուած են իրենց հազուստներուն պատրաստութեանը համար։ Կրնաք ըսել ինձ թէ որ տունկերն են անոնք։

— Բամպակենին, վուշը և կանեփը, որոնք կուտան թել մը, որով կտաւ կը գործուի։

— Լաւ։ հիմա ըսէք ինձ, մարդս ինչպէս կըրցած է պատրաստել իրեն համար անձրեին, ցուրտին, արևուն ջերմութեան, վերջապէս եղանակներու խստութեան դէմ պատսպարուելու բաւող բնակարան մը։

Ծառերէն հայթայթած է ան իրեն կարեւոր փայտը, շինելու համար խրճիթներ և տուներ։

— Ուրիշ։

— Հանքերէն՝ քար, երկաթ հանած է։

— Ոչ միայն քար և երկաթ, այլ նաև կիր, գաճ և այլն։ կառուցանելու համար ընդարձակ և դիւր շինուածքներ, որոնք փայտակերտ շէնքերէն աւելի հաստատուն և դիմացկուն են։



#### Գ.Ա.Ս Ժ.Զ.

##### ԱՊԱԿԻ

— Տղաք, գիտէք, ի՞նչ է ձեռքս բոնած սա առարկան։

— Ապակիի կտոր մըն է, օրիորդ։

— Այս ապակիին մէջէն կրնաք տեսնել։

— Այս, օրիորդ։ կրնանք տեսնել։

— Ապակին ի՞նչ է ուրեմն։

— Ապակին թափանցիկ է։

- Ապակին ի՞նչ բանի կը գործածեն մարդիկ:
- Մարդիկ ապակին կը գործածեն պատուհանները գոցելու :
- Ուրիշ ի՞նչ բանի կը գործածուի ապակին:
- Ապակիով կը շինուին հայելի, գաւաթ, շիշ եւն.:
- Ի՞նչ պիտի պատահէր, Նուարդ, եթէ մեր սենեակներու պատուհանները ապակիով գոցուած չըլլային :
- Մեր սենեակներէն ներս պիտի թափէր անձրևն ու ձիւնը և չպիտի կրնայինք պատըսպարուիլ հովին դէմ :
- Եւ եթէ ապակիի տեղ փայտով ծածկած ըլլայինք պատուհանները :
- Այն ատեն, օրիորդ, յստակ չպիտի կրնայինք տեսնել :
- Ուրեմն, տղաքս, բնակարաններու շինութեան համար կարեւոր նիւթ մըն է նաև ապակին:



#### Դ. Ա. Ս. Ժ. Բ.

ԵՐԿԱՔ

Օրիորդը.— Հիմա, տղաքս, լաւ մը դիտեցէք այն բոլոր առարկաները որոնք կարգաւ պիտի շարեմ սեղանիս վրայ. անոնց անունները առուեք և ըսէք ինձի թէ ի՞նչ բանի կը գործածուին:

(Ուսուցիչը կարգաւ կը գնէ սեղանին վրայ երկաթէ զրիչ մը, քանի մը հատ ասեղ, պտուտակ մը, քանի մը գամ: Հետղինետէ տղաք այս

առարկաներուն իւրաքանչիւրին անունը կուտան. ուսուցիչը բացատրել կուտայ անոնց ամեն մէկուն գործածութիւնը:)

— Հիմա, սիրուն տղաքս, այս բոլոր առարկաները, որոնց անունը տուիք դուք, գիտէք թէ ինչ նիւթէ շինուած են:

— Ամենքն ալ երկաթէ շինուած են, օրիորդ:

— Այն, երկաթէ շինուած են. կրնամք ըսել թէ երկաթն ուսկից կը հանուի:

— Երկաթը կը հանուի հողին տակէն:

— Կը կարծէք որ հողին մէջ գտնուին ասոր պէս երկաթի կտորուանք :

(Օրիորդը ցոյց կուտայ բափու երկարի կտոր):

— Ոչ, օրիորդ, դուք ըսկիք որ հողին մէջէն հանուած երկաթը քարերու կամ ուրիշ նիւթերու նետ խառնուած կըլլայ:

— Այո ճիշտ ասոր պէս (Օրիորդը կը ցուցնէ չը գտուած մետաղի կտորը): Լաւ մը գիտեցէք սա. պիտի կրնայիք ճանչնալ թէ ասիկա երկաթ է. թէ որ ձեզի շրսէի զայն:

Երկաթն երբ այսպէս չգտուած ըլլայ կը կոչուի «հանածոյ» կամ «հանք»: Դուք չ'էք գիտեր հիմա թէ մարդիկ ի՞նչ միջոցով կը գտեն այս հանածոյն: Ի՞նչպէս կը հանեն ասոր մէջի երկաթը: Ատիկա պիտի սորվիք երբ որ քիչ մըն ալ մեծնաք:



Ա Ճ Ա Ռ

Օրիորդը .— Լաւ մը քննեցէք ինչ որ ձեռքս  
բռնած եմ . շօշափեցէք զայն և ըսէք տեսնեմ  
թէ ի՞նչ է այն :

— Աճառի կտոր մըն է, օրիորդ :  
— Աճառը՝ օգտակար է: Կրնաք ըսել թէ ի՞նչ  
բանի օգտակար է :

(Թուել տուել մաքրութեան այն ամեն պարագաները որոնց  
համար անառ կը գործածուի) :

Օրիորդը .— Մաքրութիւնը անհրաժեշտ բան  
մըն է :

— Այն, օրիորդ . մաքրութիւնը պէտքի բան է:  
— Ըսել կ'ուզէք թէ մաքրութրւնը անհրա-  
ժեշտ է առողջութեան, չէ : Անոնք որ առողջ  
մնալ կ'ուզեն՝ պէտք է միշտ մաքուր ըլլան: Երբ  
քիչ մըն ալ մեծնաք, պիտի բացատրեմ ձեզի թէ  
մենք ոչ միայն բերնով և թոքերով կը շնչենք,  
այլ կը շնչենք նաև մորթով . որպէս զի մորթը  
կարենայ շնչել . կարևոր է որ անիկա կատարե-  
լապէս մաքուր ըլլայ: Մեր հագուստներն ալ  
մաքուր ըլլալու են . մեր կարասիները և այն ա-  
մեն առարկաներն զոր կը գործածենք մենք. վա-  
սըն զի անմաքրութիւնը՝ այսինքն՝ աղտոտու-  
թիւնը կրնայ բերել ամեն տեսակ հիւանդու-  
թիւններ: Տղաք, ի՞նչ ընելու է առաւօտուն  
վարժարան գալէ առաջ :

— Պէտք է մաքրուիլ, ջուրով և աճառով  
լուալ ձեռքերը և երեսները :

Օրիորդը .— Մարդ ի՞նչ կզգայ երբ կը տեսնէ  
աղտուա տղայ մը, զայն սիրելու, անոր մօտենա-  
լու, անոր ձեռքին դպչելու փափաք կունենայ:  
ինչու արդեօք :



Օ Դ

Օրիորդը .— Այս սրահին մէջ, ձեր չորս կող-  
մը, ի՞նչ կայ, տղաք, կրնաք ըսել :

— Օդ կայ, օրիորդ, օդ կայ :  
— Օդն ինչպիսի մարմին է :  
— Օդը չի տեսնուիր, օրիորդ :  
— Ըսել կ'ուզէք թէ օդը շատ նուրբ և թա-  
փանցիկ մարմին մըն է, աղէկ . կրնաք ըսել ինձ  
օդը գոյն հւնի :

Աշակերտ մը .— Ունի :

Ուրիշ մը .— Զունի :

Օրիորդը .— Օդը քիչ քանակութեամբ եղած  
ատեն անգոյն է, այս սրահին օդին պէս . իսկ  
մեծ քանակութեամբ եղած ատեն կապոյտ գոյն  
մը կ'ունենայ, ինչպէս որ կրնանք տեսնել զայն,  
երբ գուրս ելած ատեննիս, աչքերնիս դէպի վեր  
բարձրացնենք : Հիմա . ի՞նչ կը կարծէք օդն օգ-  
տական է մեզի :

— Օդն օգտակար է, առանց օդի շունչ չենք  
կրնար առնել :

— Օդն ոչ միայն օգտակար, այլ անհրաժեշտ է, տղաքս, բոլոր շնչաւորներուն համար : Առանց օղի մարդ չի կրնար ապրիլ : Կրնաք օրինակով մը հաստատել այս ըսածս :

— Այն, օրիորդ, երբ որ շունչերնիս բռնենք, կը նեղուինք :

— Տղաքս, երբ որ մէկուն քիթն ու բերանը ուժով մը զոցենք, ներս օդ չի կրնար առնել, շնչառութիւնը կը դադրի և կը մեռնի : Ի՞նչ կը կարծէք, միայն շնչաւորները պէտք ունին օդի ապրելու համար :

— Ոչ, օրիորդ, ծաղիկներն ալ պէտք ունին օդի :

— Ոչ միայն ծաղիկները, տղաք, բոլոր բոյսերն ալ չեն կրնար աճիլ ու կը թառամին :

Հիմա ըսէք ինձ թէ մենք շնչառութիւնը ի՞նչ-պէս կը կատարենք . այսինքն ո՞ր բանովը օդ կ'առնենք :

— Մեր քիթովը և բերնովը կ'առնենք օդ :

Ըսել կ'ուզէք թէ մենք մեր շնչառութիւնը կը կատարենք զլաւորաբար մեր քիթովն ու բերնովը : Օդին այդ ճամբով ներս առնելուն ի՞նչ անուն կը տրուի :

(Ոչ ոք կը պատասխանէ : )

Օր .— Օդին այդ ճամբով ներս առնենում Շնչառում» կ'ըսուի : Բայց երբ նոյն ճամբով ալ՝ օդը դուրս կուտանք մենք, օդին այս դուրս տըրուելուն ի՞նչ անուն կը դրուի :

(Ոչ ոք կը պատասխանէ : )

— Ատոր ալ «արտաշնչում» կ'ըսուի : Հիմա, տղաք, կրնաք ըսել թէ ներշնչմամբ Բնչ տեսակ օդ ներս կ'առնենք մենք :

— Ներշնչմամբ մաքուր օդ կ'առնենք : Իսկ արտաշնչմամբ Բնչ տեսակ օդ դուրս կուտանք :

— Արտաշնչմամբ ալ աղտոտ օդ դուրս կուտանք :

— Ուրեմն երբ սենեակի մը մէջ նստած ենք, մեր արտաշնչած աղտոտ և թունաւոր օդէն Բնչ-պէս պէտք է զգուշանանք :

— Պատուհանները բանալով: Այսինքն սենեակին օդը փոխելով:

— Օդը այս կերպով փոխելու պէտք է մեծ ուշադրութիւն ընել, մանաւանդ ձմրան՝ ուր սովորութիւն է ժամերով փակուած մնալ միենոյն սենեակին մէջ:

Շատ լաւ, բաւական խօսեցանք օդին վրայ: Հիմա անցնինք խօսակցիլ քիչ մ'ալ տարբեր նիւթի վրայ:



### Դ. Ա. Ս Ի. Ա.

ՇՈԳԻ, ԱՄՊ, ԱՆՁՐԵՒ, ՍԱՌ, ԶԻՒՆ,

Օրիորդը .— Վահրամ, կրնաք ըսել թէ ջուրն Բնչ կ'ըլլայ, երբ կաթսայով եւացունենք զայն կրակի վրայ:

— Զուրը կը հատնի, օրիորդ:

— Զուրը կը շոգիանայ ըսել կ'ուզէք։ Լաւ գիտած էք նաև թէ ինչ կը պատահի, երբ կափարիչ մը բոնենք շոգիացած ջուրին վրայ։

— Այն, օրիորդ, կափարիչը ջուրի փոքրիկ կաթիլներով կը ծածկուի։

— Այն, ճիշդ այդպէս է։ Բայց ի՞նչպէս, ուրկէ կը գոյանան այդ կաթիլները. . . չե՞ս կարող ըսել։ Եռացող ջուրին վրայ դրած կափարիչնիս տաճք երթէ պաղ։

— Կափարիչը պաղ էր, օրիորդ։

— Ուրեմն կափարիչն պաղութիւնն էր որ շոգին նորէն ջուրի փոխեց. այնպէս չէ։

— Այն, օրիորդ, կափարիչն պաղութենէն շոգին նորէն փոխուեցաւ ջուրի։

— Լաւ, հիմա ամենքդ մէկտեղ պատասխանեցէք, տեսնեմ, ջուրը տաքնալով ի՞նչի կը փոխուի։

— Շոգիի։

— Շոգին պաղելով ի՞նչի կը փոխուի։

— Շոգին ալ պաղելով կը փոխուի ջուրի,

— Արաքս, կը յիշես անցեալ ամիս առատ անձրեւ մը եկաւ, որ բոլոր գետինը թրջեց և ցեխուտեց։


— Այո, օրիորդ. կը յիշեմ։

— Լաւ գետինները երկար ատեն այդպէս թրջուած ու ցեխուտած մնացին։

— Ոչ, մէկ երկու օրէն այդ գետինները առաջուած պէս չորցան։

— Մէկ երկու օրէն այդ ջրերն ի՞նչպէս անյայտ եղան։

— Հողը ծծեց զանոնք, օրիորդ։



— Ամենքն ալ հողը ծծեց :  
— Ոչ, օրիորդ. մէկ մասն ալ շոգիացաւ:  
— Բայց առանց կրակի ի՞նչպէս շոգիացաւ  
ան: Զէ՞ մի որ ջուրը կրակի վրայ եռալէն ետքը  
կը շոգիանայ:

— Այս, ջուրը կրակով կը շոգիանայ...  
— Ի՞նչ կը կարծես կրակը միայն կը շոգիա-  
ցնէ ջուրը, արեւն ալ տաքութիւն չունի՞: պէտք  
է գիտնանք որ այն անձրեւին մէկ մասն ալ ա-  
րեւին տաքութեամբ շոգիացաւ:

Շատ աղէկ, ուրիշ հարցում մըն ալ ունիմ,  
կուզէի զիտնալ, Արամ, թէ արեւու տաքութենէն  
անձրեւներու ջուրե՞րն են միայն որ կը շոգիանան:

— Ոչ, երկիս վրայի բոլոր ջուրերն ալ կրնան  
շոգիանալ արեւու տաքութեամբ:

— Ո՞ւր կերթան, ի՞նչ կ'ըլլան այդ շոգիները:

— . . .  
— Շողին որովհետեւ թեթեւ է օդէն, միշտ  
դէպի վեր կ'ելլէ, պարապ գնդակներու ձեւեր առ-  
նելով: Այդ պարապ գնդակներն՝ որոնք հետզհետէ  
դէպի վեր կը բարձրանան, գիտէ՞ք թէ ինչ կը  
կոչուին:

— . . .  
— Այդ պարապ գնդակները կը կոչուին ամպ-  
ուրեմն ի՞նչ բանէ կազմուած են եղեր այն ամ-  
պերը, որոնք կը տեսնենք միշտ մեր գրլխուն վրայ:

— Ամպերը կազմուած են շոգիէ:  
— Շատ լաւ. քիչ մը առաջ ըսիք թէ երկ-  
իս բոլոր ջրերը արեւու տաքութեամբ կը շո-  
գիանան, այնպէս չէ:

— Այս:  
— Այսպէս շոգիանալով, արդեօք երկրիս  
ջուրերը չեն հատնիր, ի՞նչ կ'ըսէք:  
— Ոչ, օրիորդ. չեն հատնիր՝ նորէն ջուրի  
կը փոխուին:

— Ինչպէս որ, տղաքս, շոգին՝ պաղելով  
նորէն ջուրի կը փոխուի, այնպէս ալ այդ ամ-  
պերը՝ որոնք չոգիէ կազմուած են, պաղելով,  
իրարու կը միանան և կաթիլ կաթիլ վար կը  
թափին, որուն կ'ըսենք անձրես:

Օր. — Երբ շատ ցուրտ ըլլայ, ջուրերը ի՞նչ  
կ'ըլլան, տղաքս:

— Ջուրերը կը սառին, օրիորդ:  
— Այսինքն ըսել կ'ուզէք թէ ցուրտին ազ-  
գեցութեամբ ջուրը իր հեղուկ վիճակը կը կոր-  
ունցնէ կը դառնայ հաստատուն մարմին, ջուրը  
այս վիճակին մէջ սառած է կ'ըսուի:

Հիմա ըսէք ինձ ի՞նչ է ծիւնը և կարկուտը:

— Զիւնն ու կարկուտը սառած ջուր ըլլա-  
լու են:

— Այս, տղաքս, երբ օդին վերի կողմերը  
շատ ցուրտ է, ամպերուն ջուրը կը սառի և անձ-  
րեի տեղ կարկուտ կամ ծիւն կու գայ:

— Կրնաք ըսել թէ ի՞նչ է ծիւնահակը:

— Զիւնին հալիլը, օրիորդ:

— ծիւդ է, բայց ի՞նչ կը պատահի ծիւնա-  
հակը ըլլալու համար:

— . . . .  
— Երբ ցուրտը կը նուազի, ծիւնը և սառը

ջուրի կը փոխուին և կը վագեն գետնին վրայ,  
ահա թէ ինչ է ձիւնահալքը :



Դ. Ա. Ս Ի Բ.

ԶՄԵՐ, ԶՄՈՒՇԿ, ԲԱԼԻՆԻՐ

Օրիորդը. — Տղաքս, նախորդ դասին խօսեցանք, անձրկի, ձիւնի, սառի վրայ : Այսօր ինձի ըսէք թէ Երբ ձիւն կու գայ :

— Չմեռը, օրիորդ, ձմեռը :

— Եւ ի՞նչ է ձմեռը :

— Չմեռը ձիւնի և ցուրտի ժամանակն է :

Է. կրնաք ըսել թէ քանի՞ ամիս կը տեսէ ան :

— Երեք ամիս կը տեսէ, օրիորդ :

— Բաէք ինձ ատոնք ո՞ր ամիսներն են :

— Դեկտեմբեր, Յունուար և Փետրուար ամիսները :

— Հիմա տեսէք, տղաքս, ի՞նչ կը ներկայացնէ այս պատկերը : (Օրիորդը տղոց ցոյց կուտայ Զրման պատկեր մը) :

— Չմեռը կը ներկայացնէ, օրիորդ :

— Ի՞նչ կը տեսնէք անոր մէջ :

— Կը տեսնենք ծառեր, տուներ և զաշտագետին մը ծածկուած ճերմակ փափուկ ձիւնով :

— Ի՞նչ կ'ընեն սա տղաքը :

— Անոնցմէ ոմանք ձիւնագնդակ կը խաղան և ոմանք կը սահին ձիւնին վրայ :

— Գիտէք, տղաք, թէ ինչ կ'ըսեն սառոցին վրայ այդպէս սահելուն. «չմշկել» կ'ըսեն :

Երբ գետինը կը սառի շատ կարծր, չմշկողները, մասնաւոր կօդիկներ հազած, մեծ հաճոյքով կ'զբունուն՝ սառին վրայ սահելով, իրենց մուշտակապատ վերարկուներով լաւ մը պատրսպարուած :

Հիմա ըսէք ինձ՝ ի՞նչ բանի լծուած են սա եղջերուները :

— Սահակի, օրիորդ, սահնակի :

— Ո՛չ, տղաքս, այս ձեւ կառքը «բալխիր» կ'ըսուի, որ շատ ցուրտ երկիրներու մէջ ճամբորդութեան կը գործածուի :

Ուրեմն այս եղջերուները լծուած են . . .

ի՞նչ բանի :

— «բալխիր»ի լծուած են :



## ԶԵՌՈՒՑՈՒՄ

ՓԱՅՏ, ԱՇՈՒԽ, ՀԱՆՔԱԾՈՒԽ, ՁԵՐՄԱԶԱՓ, ՀԱՐԲՈՒԽ, ՑՐՏԱԽԱՄՔ

ՕՐԻՈՐԴԸ.— Տղաքս, ըսէք ինձ տեսնեմ ձրմ-  
րան ցուրտին դէմ ի՞նչ միջոցներով ինքզինքնիս  
կը պաշտպանենք :

Տղայ մը .— Վառարան կը վառնք տաքնա-  
լու համար :

Ուրիշ մը .— Շատ հագուստ հագնելով, օրիորդ։  
ՕՐԻՈՐԴԸ.— Աղէկ, Վահրամ, գուն ըսէ ինծի  
թէ ի՞նչ նիւթեր կը գործածենք տաքնալու համար։  
— «Ածուխ» և «փայտ» կը գործածենք տաք-  
նալու համար :

— Նաև «հանքածուխ»։ գիտէք թէ ուր կը  
գտնուի գետնածուխը :

— Գետնածուխը գետնէն կը հանեն :  
— Այս, հորեր կը բանան գետնին վրայ  
մինչև որ հանքածուխի խաւերուն հասնին։ Հան-  
քսոգործները բահով ու բրիչով կ'աշխատին և  
հանքերու մէջ հաստատուած երկաթուղիները  
կը փոխադրեն ածուխը հորերուն բերանը։

Հիմա ըսէք ինձ թէ մեր բնակարանները տա-  
րապայման կերպով տաքցնելու ենք միթէ :

— Ոչ, օրիորդ .  
— Այս, օրիորդ ,  
— Բնաւ, տղաքս, մենք չափաւոր կերպով  
պէտք է տաքցնենք մեր նստած սրահը և այս

քանին համար գիտէք թէ ի՞նչ գործիքի պէտք  
ունինք :

ՕՐԻՈՐԴԸ.— «ԶԵՐՄԱՉԱՓ»ի պէտք ունինք :  
ԶԵՐՄԱՉԱՓԸ, տղաքս, գործիք մըն է որով  
կը չափենք օդին ջերմութեան աստիճանը : Երբ  
որ քիչ մըն ալ մեծնաք, պիտի սորվեցնեմ ձեզի թէ  
ի՞նչ է ջերմաչափը և իր աստիճանները։ Առ այժմ  
սորվեցէք թէ ջերմաչափը կը գործածենք սեն-  
եակին տաքութիւնը չափաւոր պահելու համար,  
հակառակ պարագային մեր առողջութիւնը կըր-  
նայ վնասուիլ :

Հիմա, ովք պիտի ըսէ ինծի թէ ձմրան ի՞նչ  
տեսակ անհանգստութեան ենթակայ ենք գրեթէ  
ամենքս ալ :

— Հարբուխի ենթակայ ենք, օրիորդ :  
— Այս, ձիշդ է, «հարբուխ»ի և «ցրտախած-  
քի», երկուքն ալ ցրտառութեան հետեւանք են.  
պէտք է ուրեմն զգոյշ ըլլանք ցուրտէն, եթէ  
կ'ուզենք առողջ մնալ միշտ :



ԶԳԵՍՏԱԿՈՐՈՒՄ

ՄՈՒՇԱԿ, ԲՈՒՐԴ, ԱՍՈՒԻ, ՖԼԱՆԷԼ

Օրիորդը. — Նախորդ դասին կ'ըսէիք թէ  
ցուրտէն պատսպարուելու համար շատ հազնե-  
լու պէտք ունինք, հիմա. ըսէք ինձ թէ ձմբան  
ի՞նչպիսի հագուստներ կը հագնին մարդիկ:  
— Մուշտակ կը հագնին, օրիորդ:  
— Կրնաք ըսել ինձ թէ ուրկէ կ'ստանանք  
մուշտակները:  
— Մուշտակները կենդանիներէն կ'ստանանք  
— Եւ ո՞ր կենդանիներէն:  
— Կատուէն և նապաստակէն:  
— Կատուէն և նապաստակէն զատ աքիսը,  
կզաքիսը, ջրաղուէսը, ջրշունը, սամոյրը ևայլն  
կուտան իրենց մուշտակը, որոնք շատ գեղեցիկ  
ալ են: Այս կենդանիները կ'որսացուին որսորդ-  
ներէն. Բացի այս կենդանիներէն մարդիկ ուրիշ ո՞ր  
կենդանիներէն կ'ստանան իրենց հագուստինախ-  
նական նիւթերը. ուրիշ կերպով ըսենք, ո՞ր կեն-  
դանիները կուտան մեզի իրենց բուրդը:  
— Ոչխարը, օրիորդ:  
— Այծը, օրիորդ:  
— Բուրդէ ի՞նչ կը պատրաստուի, գիտէք:  
— Հագուստ, օրիորդ. հագուստ:  
— Նախ և առաջ «ասուի» և «Փլանէլ», նաև  
գանազան բրդեղէն կերպամներ, որոնցմէ ապա  
հագուստ կը շինենք մեզի:

ԳԱՐՈՒՆ

ՀԵՐԿ, ԱՐՕՐ, ՄԱՆԿԵՐ, ԾԻԾԵԲՆԱԿՆԵՐ, ԹՌՉՈՒՆՆԵՐ

Օրիորդը. — Սիրելի տղաք, այսօր ձեզի ցոյց  
պիտի տամ աղուոր պատկեր մը: (Եւ օրիորդը աշա-  
կերտներուն կը ներկայացնէ Գարնան պատկեր մը):  
Տեսէք, ի՞նչ կը ներկայացնէ այս պատկերը:  
— Օրիորդ, գեղեցիկ պատկեր մըն է, «Գա-  
րունը» կը ներկայացնէ:  
— Ի՞նչէն ճանչցած, տղաք?  
— Ահաւասիկ ծառերը որ ծաղկած են ա-  
ռանց տերեւի, թիթեռնիկները և մեղուները կը  
թռչն ծաղկէ ծաղիկ: Պարտիզանը կը փորէ  
հողը: Ահա թռչունները որ կուգան երամով:  
— Աղէկ, տղաքս, նախ ըսէք ինձ թէ ի՞նչ է  
գարունը:  
— Գարունը տարւոյն մէկ եղանակն է:  
— Ո՞ր ամիսներուն կը պատահի գարունը:  
— Մարտ, Ապրիլ և Մայիս ամիսներուն կը  
պատահի գարունը:  
— Այդ ամիսներուն օդը ի՞նչպէս է:  
— Շատ ցուրտ չէ, յաճախ անձրև կուգայ:  
Ցուրտը արդարէ կը մեղմանայ գարնան,  
օրերը կ'երկարին: Արեւ կը փայլի և ծաղիկները  
կը ծաղկին: Տղաք, հողագործը ի՞նչ ընելու պար-  
տաւոր է:  
— Գետինը փորելու է:  
— Հողը «հերկելու» է, ըսել կ'ուզէք, չէ:  
— Հապա պարտիզանը:

— Պարտիզանն ալ ծաղիկներ կը մշակէ .  
բոյսերուն արմատները կը խնամէ . հողը կը պա-  
րարտացնէ աղբով :

— Ըսէք ինձ՝ հողագործը ի՞նչով կը հերկէ  
երկիրը . յետոյ ի՞նչ կ'ընէ և ի՞նչ գործիքով կը  
հաւասարեցնէ հերկած հողը :

— Հողագործը . . . կը հերկէ . . .

Օրիորդը .— Լաւ . ինձ մտիկ ըրէք, հողագոր-  
ծը կը հերկէ հողը «արօրով», յետոյ հունտերը  
կը ցանէ և ապա «մանկեռով» կ'անցնի վրայէն՝  
ցանուած հունտերը հողով ծածկելու և գետինը  
հաւասարեցնելու համար . Հիմա, ըսէք, հողա-  
գործը կը հերկէ . . . ի՞նչով :

— Արօրով:

— Կը ցանէ . . . ի՞նչ :

— Հունտեր :

— Գետինը կը հաւասարեցնէ . . .

— Մանկեռով:

— Գարնան բոյսերը ի՞նչ կ'ըլլան :

— Գարնան բոյսերը դալար տերևներով կը  
ծածկուին :

— Աղէկ, պատկերին մէջ երեւցած սա թըռ-  
չունները ի՞նչպիսի թոչուններ են :

— Ծիծեռնակներ են անոնք և ուրիշ թըռ-  
չուններ :

— Անոնք ուր կը բնակին :

— Ծառերուն վրայ իրենց բոյներուն մէջ :

— Զեր մէջէն ուր պատիկ տղան թոչունի մը  
բոյն ունենալ կ'ուղէ :

— Ոչ մէկերնիս, օրիորդ. պատիկ թոչունիկներ  
կան անոնց մէջ :

— Ապրիք, տղաքս, թոչուններուն պէտք չէ  
դպչիլ, որովհետև անոնք շատ օգտակար կենդա-  
նիներ են : Ո՞վ կրնայ ըսել թէ ի՞նչ օգուտ ու-  
նին անոնք :

— Կ'երգեն, օրիորդ. կը ճռուողեն :

— Տղաքս, անոնք կը ջնջեն վնասակար մի-  
ջատները և թրթուրները :



#### Գ Ա Ս Ի Զ.

### ՄԻԶԱՏՆԵՐ

ԶՈՐԵԱԿ. ՄԵՇՈՒ. ՇԵՐԱՄ

Օրիորդը .— Ըսէք ինձ, տղաքս, բոլոր միջատ-  
ներն ալ վնասակամը են :

— Ոչ, օրիորդ, անվնասներ ալ կան :

— Ո՞ն է, ըսէք, այն աղուոր փայլուն մի-  
ջատը որուն հետ կը խաղաք գարնան դերձանի  
մը ծայլը բանտարկած :

— «Զորեակը», օրիորդ, «զորեակը»:

— Զորեակը, տղաք, մարդոց անվնաս այլ  
անօգուտ միջատ մըն է, բայց ո՞ն է այն փոքրիկ  
միջատը որ թէկ կը խայթէ բայց շատ օգտակար  
է իր անուշ հիւթովը :

— Մեղուն է այն, օրիորդ, մեղուն :

— Մեղուն ի՞նչ կ'արտադրէ, տղաքս :

— Մեղք կ'արտադրէ:  
 Ուրիշ տղայ մը.— նաև մեղրամում,  
 — Ո՞ւսկից կ'առնէ իր հիւթը:  
 — Ծաղիկներէն, օրիորդ, և իր մեղը կը  
 շինէ փեթակի մէջ:  
 — Աղէկ տեսած էք փեթակ մը:  
 — Ոչ, օրիորդ, չենք տեսած:  
 — Լաւ, ըսեմ ձեզի. մեղուները փեթակին  
 ներքնակողմը մեղրամումէ խցիկներ շինած են,  
 որոնք բջիջ կ'ըսուին. այդ բջիջներուն մէջ թա-  
 գուհի մեղուն հաւկիթներ կ'ածէ, իսկ զործաւոր  
 մեղուները պարապ բջիջները մեղրով կը լեցնեն:  
 Երբ քիչ մըն ալ մեծնաք աւելի ընդարձա-  
 կօրէն պիտի խօսինք ձեզի հետ այս նիւթին  
 վրայ:

Տղաքս, ըսինք թէ որդերը և թրթուրները  
 շատ մեծ վնաս կը հասցնեն բոյսերուն՝ զանոնք  
 ուտելով զրեթէ կը փճացնեն: Բայց չկարծէք թէ  
 բոլոր որդերն, առանց բացառութեան, նոյնչափ  
 վնասակար և անպէտ են, կայ պատիկ որդ մը որ  
 կ'արտադրէ նուրբ և փայլուն թել մը, կը ճանչ-  
 նաք զայն:

— Այն, օրիորդ, «շերամը» րլալու է այդ:  
 — Ստուգիւ «շերամն» է, ըսիք թէ շերամը  
 որդ մըն է բայց պէտք է զիտնաք որ անիկա յա-  
 ռաջ կուզայ փոքրիկ ձուէ մը, այնչափ փոքր որ  
 կարծես ուլունք մըն է. երբ փոքրիկ որդը մեծ-  
 նայ իր բերնէն նուրբ թելեր դուրս կուտայ և  
 անոնցմով կը հիւսէ իրեն համար մետաքսէ

բժոժ մը. մէկը կը փակուի, կ'անցնի քիչ մը ատեն  
 և ահա օր մըն ալ բժոժը կը ծակէ և ուուրս կու-  
 գայ թիթեռնիկ մը եղած:  
 Գիտէք, տղաք, ինչով կը սնանի շերամը:  
 Տղայ մը. — Տերեւով կը սնանի:  
 Օրիորդը. — Այն, թթենիի տերեւով, հիմա  
 դուք ըսէք ինձ թէ ինչ կ'արտադրէ շերամը:  
 — Շերամը մետաքս կարտագրէ:  
 — Մետաքսը ինչ բաներու կը գործածուի:  
 — Օրիորդ, շատ գեղեցիկ բաներ կը շինուի  
 անկէ ժապաւէն: . . .  
 — Մետաքսեղին կերպասներ, թաւիշներ, ե-  
 րիզներ և բանուածքներու համար գոյնզգոյն մե-  
 տաքսէ թելեր:



Դ. Ա. Թ. Ի.

Ա Մ Ա Ռ

ՀՈՒՆՁՔ, ՀԱՑԱԲՈՅԱՐ

Օրիորդը. — Ահաւասիկ երրորդ պատկեր մըն  
 ցոյց կուտամ ձեզի: (Օ՛խորդը կը պարզէ Ամբան  
 պատկեր մը):

— Ի՞նչ կը ներկայացնէ այս պատկերը:  
 — Ամառուան պատկեր մըն է:  
 — Ի՞նչ է ամառը:  
 — Ամառը տարուան մէկ եղանակն է:  
 — Ո՞ր ամիսներն են ամրան ամիսները:

— Յունիս, Յուլիս, Օգոստոս:

— Ըսէք ինձ, տղաքս, պատկերին նայելով,

ի՞նչ փոփոխութիւն տեղի կ'ունենայ բնութեան  
մէջ ամրան :

— Ահաւասիկ ծառերը բոլորովին ծածկը-  
ւած են տերեւներով, արտերը հունձքերով, պը-  
տուզները հասուն երեւոյթ մ'ունին, խաղողնե-  
րը դեղին ողկոյզներով կախուած են որթա-  
տունկերուն վրայէն։ Օրերը շատ աւելի երկար  
են և օդը տաք է։

— Տղաք, տեսէք մշակը իր ձեռքը բոնած է  
կեռ երկաթ մը, ի՞նչ է այդ գործիքը։  
— Յորենը կտրելու գործիք։  
— Մանզաղ մըն է այդ. հիմա ըսէք ամրան  
հողագործը ինչ աշխատութիւն կը կատարէ։  
— Յորենը կը կտրէ։  
— Ամրան մէջ ցորենը կը հնձեն և որաներ  
կը կապէն։

— Միայն ցորենը կը հնձեն. զիտէք թէ ո-  
րոնք են «հացարոյսերը»։  
— Յորենը հացարոյս է։  
— Ոչ միայն ցորենը, այլ գարին, հաճարը,  
վարսակը հացարոյսեր են, որովհետև անոնցմով  
ալ հաց կրնայ պատրաստուիլ։



ԱՑԳԵԿՈՒԹՔ, ՈՐՔ, ԽԱԼՈՂ, ԳԻՆԻ, ՀՆՁԱՆ, ՏԱԿԱՌ, ԽՆՁՈՐ, ԽՆՁՈՐԴԻ

Օրիորդը. — Տեսէք, տղաքս, ահաւասիկ ձեզի  
ուրիշ պատկեր մըն ալ (Օրիորդը ցոյց կուտայ Աշնան  
պատկեր մը)։

— Ըսէք ինձ տեսնեմ ի՞նչ պատկեր է այս:  
— Աշնան պատկերն է, օրիորդ։  
— Աշունը ի՞նչ է:  
— Աշունը տարուան մէկ ուրիշ եղանակն է։  
— Որոնք են աշնան ամիսները:  
— Աշնան ամիսներն են Սեպտեմբեր, Հոկ-  
տեմբեր, Նոյեմբեր։

— Հիմա զիտեցէք պատկերը և պատասխա-  
նեցէք հարցումներուա։ Ի՞նչ փոփոխութիւն կը  
նշմարէք բնութեան վրայ։

— Պատկերին վրայ կը տեսնենք որ արտե-  
րը հնձուած են բոլորովին, ծառերուն տերեւնե-  
րը մեծ մասամբ գեղնած, կը տեսնենք թռչուն-  
րը որ երամով կ'անցնին երկնից երեսէն, եր-  
ներ որ երամով կ'անցնին երկնից երեսէն, եր-  
կընքին վրայ ամպեր կան։ Լաւ, հիմա ըսէք թէ  
օդն ի՞նչ վիճակ ունի, առաջուան չափ տաք է։

— Ոչ, օրիորդ, օդը կ'սկսի ցըտել մերթ ընդ  
մերթ անձրեւներ կը տեղան։

— Եւ օրերը շատ երկար են։  
— Օրերը կ'սկսին կարճնալ։  
— Տեսէքսա զիւղացիները որ խմբովին կ'եր-

թան կոնակնին կողովներ առած, ի՞նչ աշխատութիւն ունին կատարելիք:

— Տղաքս, «Այգեկութք»ի ժամանակ է, անոնք կ'երթան քաղել խաղողի հասուն ողկոյզները: Հսէք թէ խաղողը հւր կը բուսնի:

— «Որթատունկերուն վրայ»:

— Խաղողով ի՞նչ կը շինուի:

— Խաղողով գինի կը շինեն:

— Լաւ, ով կրնայ պատմել թէ խաղողէն ի՞նչպէս գինի կը պատրաստեն:

— Լաւ, մտիկ ըրէք, տղաք, խաղողի ողկոյզները կը լեցնեն հնձանին մէջ և ոտքով կը ճմեն, հիւթը կը հոսի ահագին տակառի մը մէջ որ հընձանին տակը դրուած է: Այս հիւթն է որ խմորելով կ'ըլլայ գինի: Այդ գինին վերջապէս շիշերու մէջ կը լեցնեն և կնքամոմով կը կնքեն խիցը:

— Կը տեսնէք սա ծառերը կարմիր պտուղներով. ի՞նչ են անոնք:

— Ինձորենիներ են, օրիորդ:

— Լաւ, տղաք, այս կարմիր խնձորենիներէն է որ կը շինուի «խնձորօղին»:


— Կրնանք ըսել ինձ, տղաք, թէ հողագործը ինչ աշխատութիւն ունի աշնան:

— Հողագործը երկիրը կը հերկէ աշնան:

— Երկիրը կը հերկէ ինչո՞վ:

— Երկիրը կը հերկէ արօրով:

— Եւ ի՞նչ կը ցանէ:



- Բոյսեր, օրիորդ:
- Յորեն կը ցանէ, տղաքս, հերկուած գետ-նին վրայ, յետոյ, տափանով կը հարթէ գետինը:
- Յորենը ամբողջ աշունը, ձմեռը պէտք է մնայ թաց հողին մէջ, գարնան ծլելու և ամրան հունձք տալու համար:
- Աշնան ի՞նչ կ'ընեն ցորենը:
- . . .
- Աշնան կը կամնեն ցորենը և ցորենի հա-տիկները յարդէն զատելու համար կերնեն:



Դ.Ս.Ս Ի.Է.

### ԱԳԱՐԱԿ

Զի, է՛տ, ՀՈՎՈՒԻ ՇՈՒՆ, ԳԱՅԼ, ՈՉԻԱՐ, ԽՈԶ, ՀԱԻ, ԱՂԱԻՆԻ,  
ԿԱՑՆԱՐԱՆ, ԿԱԹ, ԿԱՐԱԳ, ՊԱՆԻՐ.

*Օրիորդը.* — Հիմա ըսէք տեսնեմ, սիրուն տը-  
ղաք, ի՞նչ պատկեր է այս և ի՞նչ կը տեսնէք ա-  
նոր մէջ:

— Շատ աղուոր պատկեր մըն է, օրիորդ,  
մենք հոն կը տեսնենք հաւնոցի բոլոր հաւերը,  
կը տեսնենք փոքրիկ խողեր, շուն մը շղթայով  
կապուած, ձիեր, աղաւնիներ, աւելի հեռուն

կովեր կ'արածին, ձիադարման մը որ ձիեր կը  
խնամէ:

— Այս պատկերը «ագարակ» կը ներկայա-  
ցընէ: Տղաք, գիտէք ինչ է ագարակը: Այնպի-  
սի տեղ մըն է, ուր ընտանի կենդանիներ կը  
բուծանեն, անոնց կաթը, հաւկիթը, միսը ստա-  
նալու համար. հոն կ'զբաղին երկրագործու-  
թեամբ, կը մշակեն ընդարձակ հողեր: Կրնաք  
ըսել, տղաք, որոնք են ագարակի մը մէջ գլո-  
նուած ընդանի կենդանիները:

— Հաւը, աղաւնին, կովը, ձին:

— Եւ դեռ ուրիշ:

— Խոզը, ճագարը, այծը, ոչխարը, հնդկահա-  
ըր, սագը, էշը, գոմէշը:

— Դուք կը մոռնաք հովիւին շունը:

— Այն, օրիորդ, նաև շունը:

— Շունը ի՞նչ օգուտ կը կարծէք որ ունենայ:

— Պահպանութիւն կ'ընէ:

— Այն, տղաք, պահպանութիւն կ'ընէ հօ-  
տին, որովհետև շատ անզամ գայլը կ'այցելէ  
և կը կոտորէ ոչխարները, եթէ շուն չըլայ հո-  
վիւին հետ:

Ուրիշ հարցում մը ևս: Ի՞նչ կը կարծէք,  
տղաք, այսքան կենդանիներ բուծանելու հա-  
մար սնունդ պէտք չէ:

— Այն, օրիորդ, պէտք է:

— Ի՞նչպիսի սննդեան պէտք ունին կեն-  
դանիները:

— Խոտի պէտք ունին, նաև գարիի, եզիպտացորենի:

— Մի մոռնաք յարդը և չոր խոտը, որոնք անհրաժեշտ են ձմեռը: Ընտանի անասուններուն սննդեան համար պէտք եղած ամեն բան ագարակին հողերէն յառաջ կուգայ. ով կը մշակէ ատոնք:

— Մշակները:

— Ճիշդ է, ագարակին մէջ կան ուրեմն մըշակներ, և գեռ ուրիշ:

— Շատ ծառայողներ:

— Այն, կաթնարանին, հաւնոցին, ախոռներուն համար յատուկ ծառաներ և աղախիներ կան, հոտերուն համար հոփիւներ:

— Գիտէք թէ կաթով ի՞նչեր կը պատրաստեն:

— Կաթով կը պատրաստեն պանիր, մածուն, կարագ, սեր:

— Հաւերէն ի՞նչ կ'ստանան:

— Հաւկիթ և վառեակներ:

— Բոլոր այս արտադրութիւնները ի՞նչ կ'ընեն:

— Կուտեն, օրիորդ:

— Ոչ ամենքը, տղաքս, աւելորդը կը ծախեն վաճառանոցները: Ագարակին մէջ ուր բազմաթիւ ծառաներ կան, ով է որ կը հրամայէ և կը հսկէ աշխատութիւններուն վրայ:

— . . . .

— Ագարակապանը և իր կինը որ կ'ըսուի ագարակապանուհի: Անոնք են որ կը հսկեն ագարակին մատակարարութեան:



### Գ Ա Ս Ի Ե.

## ԱՐՈՂՉԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԴ ԶԳԱՅԱՐԱՆՔՆԵՐ, ԿԵԱՆՔ. ՍԱՆԴԱՐՈՒԹԻՒՆ

— Օրիորդ: — Հիմա, տղաքս, անցնինք ուրիշ նիւթի մը: Մարդիկ հինգ զգայարանք ունին. ասոնք են տեսանելիք կամ աչք, շօշափելիք կամ ձեռք, ճաշակելիք կամ բերան, հոտոտելիք կամ լսելիք կամ ականջ: Այս հինգ զգայափիթ և լսելիք կամ ականջ: Այս հինգ զգայափիթ է որ կզգանք և զգալը կեանքն է, բանքներով է որ կզգանք և զգալը կեանքն է որ զգալ կամ, ուրիշ կերպով ըսենք, կեանքն է որ զգալ կուտայ:

Ահաւասիկ քարը, ըսէք ինձ թէ քարը կեանք ունի:

— Ոչ, օրիորդ:

— Ոչ, որովհետեւ անիկա զգայարանք կամ ու է զործարան չունի, հետևաբար կեանք ալ չունի: Տղաքս, ապրելու համար պէտք է կեանքը պահպանել, ի՞նչպէս կրնանք պահպանել զայն:

- Ուտելով, օրիորդ:
- Օրուան մէջ քանի մը անգամ կը ճաշէք,  
չէ, արդ, այդ ուտելիքները կը մարսուին, այ-  
սինքն անոնց մէկ մասը արիւնի կը փոխուի և  
այդ արիւնը պէտք է մեր կեանքին պահպանու-  
թեանը համար: Ըսէք ինձ հիմա ի՞նչ բանի  
պէտք ունինք ապրելու համար:
- Մոռնդի:
- Այո, տղաքս, լաւ ըմբւնեցիք, գոհ եմ,  
բայց ուտելիքներ կան սննդարար և ուրիշներ  
վնասակար, կան որոնց ազդեցութիւնը կը խան-  
գարէ մեր ներքին գործարանները, ատոնք են  
թոյները կամ թունաւոր բոյսերը, ինչպէս սունկը  
որ մահ կը պատճառէ, կան նաև փտած կամ խակ  
պտուղները, օթեկ միսերը ևայլն:
- Կրնաքըսել ինձ, տղաք, հեղուկ սնունդներ:
- Զուրո, գինին:
- Ըսէք հաստատուն սնունդներ:
- Հացը, միսը, հաւկիթը ևն:
- Ըսել է սնունդներ կան հեղուկ և հաս-  
տատուն:
- Այո, օրիորդ:
- Ե՞րբ կ'առնենք հեղուկ սնունդներ:
- Երբ որ ծարաւ ենք:
- Ե՞րբ պէտք ունինք հաստատուն սնունդի:
- Երբ որ անօթի ենք:
- Ուրեմն ծարաւն ու անօթին երկու տար-  
բեր զգացումներ են, որոնք մեզի խմելու կամ  
ուտելու կը հորկազրեն: Արդ անօթութիւնը և

- ժարաւը զգալի կ'ըլլան . . . երբ որ մեր գործա-  
րանները պէտք ունինք . . . ի՞նչ բանի:
- Մոռնդի:
- Աղէկ, երբ որ մեր ծարաւը և անօթու-  
թիւնը կ'անցնի, ի՞նչ պէտք է ընենք:
- Ալ չուտենք, չխմենք:
- Եւ եթէ շարունակենք ուտել և խմել,  
ատիկա չափազանցութիւն է որ մեր առողջու-  
թիւնը կը խանգարէ և, գիտէք, չափազանց ու-  
տելը և խմելը որկրամոլութիւն է:
- Դուք, պզտիկ տղաքներ, դուք շատ խորհեցէք  
այս դասին վրայ:



### Դ.Ս.Ս ԻԹ.

#### ՍՆՏԱՌՈՒԹԻՒՆ (Յար.)

- Օր. — Սիրելի տղաք, պէտք է ուշադրու-  
թիւն ընել ուտելու ատեն լաւ ծամելու: Զեզմէ  
շատեր, քիչ մը ծամած՝ կը կլեն և այս բանը  
շատ գէշ է ձեր փափուկ ստամոքսին:  
Գիտէք թէ ի՞նչ է ստամոքսը:  
Քանի մը տղաք. — Այո, օրիորդ:  
Ուրիշներ. — Ոչ, օրիորդ, չենք գիտեր:  
Օր. — Ստամոքսը, տղաքս, մեր ներքին գոր-


ծարաններէն մէկն է ուր կ'երթան մեր կերած  
ամէն բաները, հոն է որ կը լուծուին անոնք և  
արիւնի կը փոխուին:



ԴԱՍ 1.

ԱՐԻՒՆ

Օր. — Գիտէք, տղաք, թէ ինչ է արիւնը,  
— Այն, օրիորդ:  
— Անշուշտ, տղաքս, տեսած էք զայն, բայց  
չէք գիտեր տակաւին անոր պաշտօնը, ուրեմն  
մտիկ ըրէք:  
Արիւնը մեր ներսիզին շրջելով մեր մարմնոյն  
ամեն մասին սնուցիչ նիւթ կը մատակարարէ և  
ատով է որ կը պահպանուի մեր կեանքը:



ՄԱՐԶԱՆՔ

Օր. — Տղաքս, մեր մարմինը կազդուրուելու  
համար ի՞նչ բանի պէտք ունի:  
— Հանգիստի:  
— Հանգիստի, ոչ, ընդհակառակը. «մարզան-  
քի» այսինքն մարմնամարզական փորձերու, զրօ-  
սանքի, նաև աշխատութեան: Աշխատութեան ըսի,  
որովհետև միայն մարմինը չէ որ աճումի, զար-  
գացումի պէտք ունի այլ և միտքը, իմացակա-  
նութիւնը, թէև ասոնց կազմութիւնը տարբեր է  
մարմնոյն կազմութենէն, բայց զարգացման օրէն-  
քը նոյն է երկուքին համար ալ:

ՑԱՆԿ



ՅԱՆԿ

հզ

	3
<b>ՅԱՌԱՋԱԲԱՆ</b>	5
Դ ա ս Ա .	7
Դ ա ս Բ .	8
Դ ա ս Գ .	9
Դ ա ս Դ .	11
Դ ա ս Ե .	12
Դ ա ս Զ .	13
Դ ա ս Է .	14
Դ ա ս Ը .	15
Դ ա ս Թ .	16
Դ ա ս Ժ .	19
Դ ա ս ԺԲ .	22
Դ ա ս ԺԳ .	23
Դ ա ս ԺԴ .	24
Դ ա ս ԺԵ .	25
Դ ա ս ԺԶ .	26
Դ ա ս ԺԸ .	28
Դ ա ս ԺԹ .	29
Դ ա ս Ի .	31
Դ ա ս ԻԱ .	
Ա ն ձ ր կ	
Ս ա ռ	
Զ ի ւ ն	
Զ ի ւ ն ա հ ա լ ք	

Դաս ԻԲ.	ԶՄԵՐ	
	Հմուշկ	36
	Բալիսիր	
Դաս ԻԳ.	ԶԵՌՈՒՑՈՒՄ	
	Փայտ	38
	Ածուխ	
	Հանքածուխ	
	Զերմաշափ	
	Հարբուխ	
	Յրտախածք	
Դաս ԻԴ.	ԶԳԵՍՏԱԽՈՐՈՒՄ	40
	Մուշտակ	
	Բուրդ	
	Ասուխ	
	Ֆլանէլ	
	ԳԱՐՈՒՆ	
	Հերկ	41
	Արօր	
	Ծիծեռնակներ	
	Թոչուններ	
Դաս ԻԶ.	ՄԻԶԱՏՆԵՐ	
	Զորեակ	43
	Մեղու	
	Շերամ	
Դաս ԻԵ.	ԱՄԱՌ	
	Հունձք	45
	Հացաբոյսեր	
Դաս ԻԶ.	ԱՇՈՒՆ	
	Այգեկութք	47

Որթ	
Խաղող	
Գինի	
Հնձան	
Տակառ	
Խնձոր, խնձորօղի	
ԱԳԱՐԱԿ	50
Զի, էշ, հովուի շուն, գայլ, ոչ- խար, խող, հաւ, աղաւնի, կաթ- նարան, կաթ, կարագ, պանիր :	
ԱՌՈՂԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ	53
Հինգ զգայարանք	
Կեանք	
Մննդառութիւն	
ՄՆՆԴԱՌՈՒԹԻՒՆ (Շար.)	55
ԱՐԻՒՆ	56
ՄԱՐՁԱՆՔ	58



ՀՀ Ազգային գրադարան



NL0243707

ԳԻՆ Յ ՂՐՈՒՇ